ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Ս. Ռ. Դավթյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս

Հանգուցային բառեր և արտահայտություններ. տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականներ, տարածական կողմնորոշման կարողություններ, տարածական ընկալում, մնացորդային տեսողություն, ուսուցում, դաստիարակություն

Տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների ուսուցման և դաստիարակության առավել արդիական խնդիրներից եղել և շարունակում է մնալ տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորումը (Վ. Զ. Դենիսկինա՝ 1996): Տեսողության խանգարումներ ունեցող երեխայի ծնվելուն պես նրա ծնողներին և հարազատներին մտահոգում է այն հարցը, թե կկարողանա արդյո՞ք փոքրիկը սովորել տեղաշարժվել առանց կողմնակի օգնության: Պարզվում է՝ ծնողների նմանօրինակ անհանգստությունը հիմնավորված է. ծանր տեսողական խանգարումը անդրադառնում է երեխայի շարժողական ակտիվության զարգացման, արտաքին միջավայրի, այդ թվում առարկաների տարածական հատկանիշների (նրանց մեծության ու ձևի), դրանց տարածական հարաբերությունների (իրար նկատմամբ ունեցած տարածական հարաբերությունների, ընկալվող օբյեկտի՝ հարթության վրա և խորության մեջ ունեցած հարաբերությունների) և շարժումների զգայական, դիտողական ընկալման, ինչպես նաև տարածության մեջ կողմնորոշվելու կարողության վրա (Լ. Ի. Սոլնցևա, Ե. Ն. Պոդկոլզինա՝ 2006): Տեսողության կորուստը կամ խանգարումը զգալիորեն ազդում են մարդու տարածական կողմնորոշման կարողությունների վրա: Տարածության մեջ կողմնորոշվել նշանակում է կարողանալ որոշել շրջապատող առարկաների և օբյեկտների միջև իր դիրքի և ընտրած շարժման ուղղությունը, հայտնաբերել այն առարկան կամ օբյեկտը, որի ուղղությամբ ինքը՝ մարդը շարժվում է: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար միջավայրում կողմնորոշվելու ունակությունը համարվում է այն կարևոր նախապայմանը, որն անհրաժեշտ է որպես լիարժեք անձի ձևավորման, տեսնող մարդկանցից չմեկուսանալու և այդ բարդույթը հաղթահարելու համար: Տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների՝ տարածության մեջ կողմնորոշվելու

անկարողության պատճառով առաջանում են որոշակի խանգարումներ, որոնք խոչընդոտում են նրանց ողջ հետագա կյանքի կայացմանը (Մ. Ն. Նաումով՝ 1982, Վ. Ա. Ֆեոկտիստովա՝ 1995, Լ.Ի. Սոլնցևա, Ս. Մ. Խորոշ՝ 2003): Տեսողությունը տարածության մեջ անվտանգ տեղաշարժվելու հնարավորություն է տալիս: Օնողների մեծամասնությունը տեղյակ է, որ մարդու կողմից տարածության և առարկաների ընկալման գործընթացը պայմանավորված է տեսողությամբ: Օնողներին անհանգստացնում է հետևյալ հարցը. «թե ի՞նչպես է չտեսնող մարդը կարողանում ընկալել տարածությունը», «Կարող է արդյո՞ք չտեսնող անձը որոշել շարժման ուղղությունը»: Այն չտեսնողները, որոնք գործնական կյանքում մտավոր և ֆիզիկական զարգացման բարձր մակարդակի են հասել, համոզիչ կերպով ապացուցում են, որ նույնիսկ բոլորովին չտեսնող մարդիկ կարող են ճիշտ և հստակ ընկալել շրջակա տարածքը և ինքնուրույն կողմնորոշվել այնտեղ: Ինչպես տեսնողների, այնպես էլ չտեսնողների ուղեղը տարածության մասին տեղեկատվություն ստանում է զգայարանների միջոցով: Չտեսնող երեխան ստանում է այդ տեղեկատվությունը պահպանված վերլուծիչների՝ լսողության, հպման, շարժողական վերլուծչի, հոտառության միջոցով: Չտեսնող անձանց ուղեղը տեսողության միջոցով տեղեկատվություն չի ստանում: Սակայն անհրաժեշտ տեղեկությունը ուղեղին հաղորդում են պահպանված զգայական օրգանները, ստացված տեղեկատվությունը վերլուծվում և ընդհանրացվում է ուղեղում: Արդյունքում՝ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների մեջ շրջակա տարածության և առարկաների մասին ձևավորվում են ճիշտ պակերացումներ, կարողանում են որոշել նաև իրենց դիրքը և առարկաների մոտավոր հարաբերական հեռավորությունը (առջևում, հետևում, աջ կողմում, ձախ կողմում, և այլն):

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների տարածության մեջ կողմնորոշումը տիֆլոմանկավարժների կողմից դիտվում է որպես կարևոր պայման լիարժեք ինքնուրույնության, ինքնասպասարկման ձևավորման համար, որպեսզի երեխան կարողանա հաղթահարել իր մեկուսացումը նորմալ տեսնող երեխաների շրջապատից: Նախադպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնության զարգացման համար առաջին հերթին անհրաժեշտ է հարստացնել նրանց գիտելիքները շրջապատի մասին, որոնք կարտացոլվեն խաղերի ժամանակ՝ ձևավորելով նոր ունակություններ, ինքնուրույն խաղի հմտություններ, կազմակերպչական կարողություններ (Մ. Կ. Մարության՝ 2006, 2007):

Տարածական կողմնորոշում հասկացությունը տարբեր հեղինակներ տարբեր կերպ են մեկնաբանում (Ռ. Ն. Ազարյան՝ 2008. Վ. Պ. Երմակով՝ 1988): Բայց բոլոր հեղինակներն էլ ցույց են տալիս, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաները ընդունակ են կողմնորոշվելու ինչպես սահմանափակ, այնպես էլ բաց տարածության մեջ՝ հիմնվելով իրենց պահպանված զգայական համակարգի վրա: Ունենալով որոշակի կարողություններ և հմտություններ՝ տարածության մեջ կողմնորոշվելու, տեսողության խանգարումներ ունեցող երեխաները կարողանում են կողմնորոշվել ժամանակի և տարածության մեջ: Տարածական կողմնորոշում ասելով հասկանում են

այն, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաները ունակ են հասկանալու և զգալու տարածությունը, շրջապատող առարկաների և երևույթների կողքին իմանալու իր տեղը, վերահսկելու և բացահայտելու անհրաժեշտ շարժումները: Մասնագետների կողմից ապացուցված է, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների տարածական կողմնորոշման հմտությունների ձևավորումը անհրաժեշտ է սկսել դեռևս նախադպրոցական տարիքից: Այս տարիքում առավել արդյունավետ է իրականացնել այդ ունակությունների ուսուցումը: Նախադպրոցական տարիքը երեխայի հոգեկանի բուռն զարգացման շրջանն է: Այս փուլի առանձնահատկություններն արտահայտվում են բոլոր ոլորտներում՝ հոգեֆիզիոլոգիական գործընթացների կատարելագործմամբ և բարդ անձնային նորագոյացությունների ձևավորմամբ: Շատ հեղինակներ այն կարծիքին են, որ մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևի վրա փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ, կազմում նրա անքակտելի մասը (Ս.Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան՝ 2005): Հետևապես՝ դաստիարակության մեջ կարևորը ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ բարդություններ է ծնում: Ինչպես ասում են՝ ծուռ տնկած ծառը դժվար է ուղղել :

Նախադպրոցական տարիքում երեխան ձեռք է բերում այն համեմատաբար կայուն աշխարհը, որը թույլ է տալիս նրան առաջին անգամ անվանել անձնավորություն՝ թեկուզ, իհարկե, դեռևս ոչ լրիվ կազմավորված, սակայն ընդունակ հետագա զարգացման ու կատարելագործման: Այս տարիքում շատ կարևոր է նաև անհատական մոտեցման պահանջը: Երեխաների նկատմամբ անհատական մոտեցման, նրա անհատականությունը հարգելու, բարդ հոգեկան աշխարհը ճանաչելու անհրաժեշտության մասին խոսել են մի շարք հայրենական և արտասահմանյան հոգեբաններ, մանկավարժներ (Ս.Վ. Մուրադյան՝ 2010, Հ. Ռ. Մկրտչյան՝ 2012, Ռ. Ն. Ազարյան, Մ. Կ. Մարության՝ 2013):

Ընդգծված է ակտիվ գործունեության դերը երեխաների անհատականության զարգացման, հոգեկան գործընթացների, անձի մտավոր, գեղագիտական, կամային հատկությունների, ընդունակությունների, բնավորության ձևավորման գործում: Դաստիարակության նկատմամբ զգայունակությունը փոխվում է ըստ տարիքի: Կ. Դ. Ուշինսկին (1959) գտնում էր, որ ինչքան փոքր է երեխան, այնքան ավելի մեծ է դաստիարաության նկատմամբ նրա դյուրըմբռնողությունը, և միաժամանակ այն, ինչ մանկության շրջանում է դաստիարակած, խիստ դժվար է «քանդել»: Այսպիսի կարծիքի են նաև Յու. Կ. Բաբանսկին (1977) և նշանավոր մանկավարժ Ա. Ս. Մակարենկոն (1951):

Տեսողության կորուստը մեծ դժվարություն է առաջացնում մարդու համար թե՛ ճանաչողական, թե՛ տարածական կողնորոշման գործընթացի ձևավորման մեջ: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար կարևոր սոցիալական խնդիր է համարվում ժամանակակից հասարակության մեջ ապրել, աշխատել, սովորել տեսնողների հետ միասին: Սոցիալական հարմարեցման առավել բարդ հիմնահարց է սահմանափակ տարածության մեջ կողմնորոշվել սովորեցնելը. այն տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար լուրջ հիմնախնդիր է:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների տարածական կողմնորոշման գործընթացները զարգանում և ձևավորվում են վաղ հասակից: Ուստի տարածական կողմնորոշման ձևավորման մակարդակը կախված է մի շարք պատճառներից, որոնք խթանում կամ արգելակում են երեխայի հոգեկան զարգացումը:

Տարածական կողմնորոշման ձևավորումը տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների շտկող-դաստիարակչական գործընթացի կարևորագույն նպատակներից մեկն է: Տարածության մեջ կողմնորոշումը անքակտելիորեն կապված է տեղաշարժման հետ, այդ իսկ պատճառով նպատակահարմար է նախադպրացական տարիքում տարածական կողմնորոշման ձևավորման հետ մեկտեղ ձևավորել նաև շարժունակությունը (Ռ. Ն. Ազարյան՝ 1987, 1990, Վ. Զ. Դենիսկինա՝ 1996): Նախադպրոցական տարիքում տեսողության խանգարումներ ունեցող երեխաները տարբերվում են նրանով, որ տարածության մեջ ինքնուրույն կողմնորոշվել և տեղաշարժվել չեն կարողանում: Դա անդրադառնում է երեխայի զարգացման և շարժողական ակտիվության վրա, որն էլ իր հերթին հանգեցնում է երկրորդական խանգարումների առաջացմանը: Երբ երեխայի շարժումները սահմանափակ են, նրա մեջ տարածությունից վախ է առաջանում: Այդ պատճառով չտեսնող երեխայի՝ արտաքին աշխարհի ճանաչումը դանդաղ է ձևավորվում, որն էլ տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների դաստիարակության համար մի շարք դժվարություններ է ստեղծում:

Տարածական կողմնորոշումը թույլ է տալիս երեխաներին ավելի ազատ և համարձակ տեղաշարժվել, ինչն էլ բերում է ինքնավստահության: Երեխան, օգտագործելով պահպանված վերլուծիչները, սկսում է ինքնուրույն քայլել, իսկ հետագայում կարողանում է տեղաշարժվել ավելի բարդ տարածություններում և հաղթահարել բազմաթիվ դժվարություններ:

Եվ այսպես, ասվածից հետևում է, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների տարածական կողմնորոշման ձևավորման և զարգացման ամենաարդյունավետ շրջանը նախադպրոցական տարիքն է: Նախադպրոցական տարիքում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ճիշտ դաստիարակության, տարածական կողմնորոշման ձևավորման և զարգացման համար մեծ դեր ունի ընտանիքը:

Որքան էլ երեխան սահմանափակ կարողություններ ունենա, անհրաժեշտ է ինքնասպասարկման, ինքնուրույնության հմտություններ, միկրո և մակրո տարածության մեջ կողմնորոշվելու ունակություններ ձևավորել: Այս գործում մեծ դեր ունեն ընտանիքը, ծնողները և հարազատները: Փորձը ցույց է տալիս, որ տարածական կողմնորոշման ձևավորման գործընթացն ավելի արդյունավետ է, երբ տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների հետ այդ աշխատանքները սկսուն են վաղ տարիքից: Այս դեպքում երեխաներն ավելի արագ են զարգանում, ավելի պատրաստված են լինում: Նրանք իրենց զարգացման տեմպերով տարբերվում են այն երեխաներից, որոնք մեծանում են այնպիսի ընտանիքներում, որտեղ տարածական կողմնորոշման ձևավորման աշխատանքներ չեն իրականացվում: Ծնողները տեղյակ չեն ինչպես դաստիարակել չտեսնող

երեխային կամ մանկավարժական բարենպաստ պայմանները բացակայում են:

Այսպիսով, տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման ձևավորման և զարգացման ուշացած աշխատանքները կամ դրանց բացակայությունը հաճախ ընտանիքում երեխայի նկատմամբ անուշադրության, ակտիվության, ինքնուրույնության, շարժունակության իջեցման պատճառ են դառնում:

Անհրաժեշտ է, որ ծնողներն առաջին հերթին գիտակցեն, որ իրենցից է կախված, թե ինչպես է տեսողության խանգարում ունեցող նախադպրոցականը զարգանալու, ինչպես է նա պատրաստվելու ինքնուրույն կյանքի: Հաճախ ծնողներից շատերը երեխայի դաստիարակություն ասելով հասկանում են նրա նկատմամբ տածած խնամքը (երբեմն՝ գերխնամքը) և երեխային, ըստ իրենց, զերծ են պահում ավելորդ շարժումներ կատարելու առիթներից, խաղերից, ֆիզիկական և մտավոր աշխատանքներից: Մինչդեռ, նման սխալ մոտեցումները միայն վնասում են երեխային, քանի որ առանց ակտիվ շարժումների, տեղափոխման, ֆիզիկական ծանրաբեռնվածության օրգանիզմը թուլանում և արագ հյուծվում է, բացի այդ, երեխայի ողջ հոգեֆիզիկական զարգացումը հապաղում է (Լ. Ա. Սեմյոնով, Լ. Ի. Սոլնցևա՝ 1989, Դ. Մ. Մալլաև՝ 2002, Ռ. Ն. Ազարյան, 2008):

Այսպիսի մոտեցման դեպքում նախադպրոցականների մեջ ձևավորվում է նաև երկչոտություն, ինքնամփոփություն, սեփական ուժերի նկատմամբ անվստահություն, կորչում են հասակակիցների հետ հաղորդակցվելու հետաքրքրությունները և պահանջմունքները, սահմանափակվում տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունները :

Ելնելով վերոհիշյալից՝ տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների ծնողներն ընտանիքում մեծ ուշադրություն պետք է դարձնեն երեխաների առողջության ամրապնդմանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը: Բազմաթիվ ուսումնասիրություններ (Ռ.Ն. Ազարյան, 1994, Վ.Ֆ. Աֆանասև՝ 1968, Լ. Ի. Պլակսինա՝ 1989) հաստատում են, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների մեծամասնությունը շարժումների կոորդինացման խանգարումներ ունի, որոնք միկրո և մակրո տարածության մեջ կողմնորոշման կարողությունների խնդիրներ են առաջացնում: Ըստ նույն աղբյուրների՝ դրանք հնարավոր է նախադպրոցական տարիքում կանխել, եթե կիրառեն վերականգնողական ֆիզիկական վարժություններ, խաղեր, խաղային վարժություններ: Ունենալով տարածության մեջ կողմնորոշվելու կարողություններ՝ երեխաների մեջ սեփական ուժերի նկատմամբ վստահություն կձևավորվի: Նրանք կլինեն ավելի աշխույժ, շարժունակ, ինքնուրույն, կտիրապետեն ինքնասպարկման կարողություններին, կյանքն առավել բովանդակալից և հետաքրքիր կդառնա:

Այսպիսով, մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների շտկողադաստիարակչական աշխատանքների արդյունավետության համար մեծ դեր ունի ընտանիքը, որն այդ գործընթացի իրականացման համար հնարավորություն ունի տարածական կողմնորոշման

ձևավորման հարցերում ցուցաբերելու վաղ միջամտություն և հաշվառելու երեխայի անհատական զարգացման առանձնահատկություններն ու կարողությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազարյան Ռ. Ն. Երեխայի տեսողությունը, Մեթոդական ձեռնարկ ծնողների համար, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2008, էջ 40:

2. Феоктисова В. А. Участие родителей в подготовке слепых детей и подростков к самостоятельной социально-трудовой жизни в обществе. // Сб. Опыт социальной реабилитации незрячей молодежи средствами трудового обучения профориентации. М.: ВОС, 1988.- с. 12.

3. Воспитание и обучение слепого дошкольника./ Под. Ред. Л. И. Солнцевой, Е. Н. Подколзиной, 2-е узд. с изменен.- М.-2006.- с. 20.

4. Денискина В.З. Совершенствование навыков ориентировки в пространстве учащихся школ для слепых и слабовидящих детей. //Метод. рекоменд. – Уфа, 1996.- с. 31.

5. Ермаков В. П. Графические средства наглядности для слабовидящих. Уч. Пособие.- М; ВОС, 1988. - с. 49.

РЕЗЮМЕ

ТЕОРЕТИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ ФОРМИРОВАНИЯ ОРИЕНТИРОВКИ В ПРОСТРАНСТВЕ У ДОШКОЛЬНИКОВ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ В СЕМЬЕ

С. Р. Давтян

преподаватель кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье представлены средства и методы обучения пространственной ориентировки дошкольников с нарушениями зрения в условиях семьи. Показана эффективность раннего обучения этих детей умениям и навыкам ориентировке в пространстве.

SUMMARY

THEORETICAL SUBSTANTIATION OF FORMATION OF ORIENTATION IN SPACE OF PRESCHOOL CHILDREN WITH VISUALLY IMPAIRMENTS IN FAMILY

S. R. Davtyan

lecturer at the Chair of Special Pedagogy and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

The following article presents the contents of the teaching process of orientation skills in environment for pre-school-aged children with visually impairments in family. The teaching process is directed towards the expansion of the children's word outlook and the formation of the objective concept existing in the environment.